ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№___610-Ա____ « 28 » փետրվարի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի Հ.3789-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 25.02.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 19-ի «Երևանի Վահագն Դավթյան փողոցի հ.1/5 բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Գուրգեն Ժորայի Եղիշյանի իրավունքները վերականգնելու, 805.86քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.3789-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան Վահագն Դավթյան փողոցի հ.1/5 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման 3-րդ կետում՝ «ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Դալլաքյանին» բառերը փոխարինել «ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ